

Թիվ 95/553/ԵՀ. Խորհրդի շրջանակներում հանդիպումներ անցկացնող՝ անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների 1995 թվականի դեկտեմբերի 19-ի որոշում

Եվրոպական միության քաղաքացիների՝ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցով իրականացվող պաշտպանության վերաբերյալ

Պաշտոնական տեղեկագիր L 314, 28.12.1995թ., էջեր 0073-0076

ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆՈՂ՝ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՈՐՈՇՈՒՄ

Եվրոպական միության քաղաքացիների՝ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցով իրականացվող պաշտպանության վերաբերյալ (95/553/ԵՀ)

ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆՈՂ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ,

հաստատակամ լինելով շարունակել կառուցել իր քաղաքացիներին էլ ավելի մոտ Միություն,

հաշվի առնելով «Եվրոպական միության մասին» պայմանագրով ներմուծված «Միության քաղաքացիություն» հասկացությունը, որը տարբերվում է «ազգային քաղաքացիություն» հասկացությունից և ոչ մի դեպքում չի փոխարինում դրան,

ցանկանալով կատարել «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի 8գ հոդվածում ամրագրված պարտավորությունը,

քանի որ նման համընդհանուր պաշտպանության միջոցառումները կամրապնդեն Միության ինքնությունը, ինչպես այն ընկալվում է երրորդ երկրներում,

հաշվի առնելով, որ երրորդ երկրներում գտնվող Միության քաղաքացիների համար համընդհանուր պաշտպանության միջոցառումները կամրապնդեն նաև եվրոպական միասնականության գաղափարը, ինչպես այն ընկալվում է տվյալ քաղաքացիների կողմից,

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հոդված 1

Եվրոպական միության յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ստանալու հյուպատոսական պաշտպանություն ցանկացած անդամ պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության կողմից, եթե նրա գտնվելու վայրում իր անդամ պետությունը կամ այն մշտական հիմունքներով ներկայացնող մեկ այլ պետություն չունի՝

- հասանելի մշտական ներկայացուցչություն կամ
- այդպիսի դեպքերի համար իրավասու հասանելի պատվավոր հյուպատոս:

Հոդված 2

1. Դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները, որոնց դիմել են, պատասխանում են տվյալ անձի ներկայացրած պաշտպանության խնդրանքին, պայմանով, որ անձնագիր կամ ինքնությունը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու միջոցով հաստատվում է վերջինիս՝ Միության անդամ պետության քաղաքացի լինելը:

2. Այդ փաստաթղթերի կորստի կամ գողության դեպքում կարող է ընդունվել քաղաքացիությունը հաստատող ցանկացած այլ ապացույց, անհրաժեշտության դեպքում տվյալ անձի պնդմամբ՝ իր քաղաքացիության պետությունը հանդիսացող անդամ պետության կենտրոնական մարմինների կամ տվյալ պետության ամենամոտ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության հետ ճշտելուց հետո:

Հոդված 3

Պաշտպանությունն ցուցաբերող դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները օգնություն հայցող անձին վերաբերվում են այնպես, ինչպես կվերաբերվեին իրենց կողմից ներկայացվող անդամ պետության քաղաքացիներին:

Հոդված 4

Չհակասելով 1-ին հոդվածին՝ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները կարող են համաձայնության գալ գործնական միջոցառումների վերաբերյալ՝ պաշտպանության վերաբերյալ դիմումների արդյունավետ կառավարման համար:

Հոդված 5

1. 1-ին հոդվածում նշված պաշտպանությունը ներառում է՝

ա) աջակցությունը մահվան դեպքում.

բ) աջակցությունը լուրջ պատահարի կամ լուրջ հիվանդության դեպքում.

գ) աջակցությունը ձերբակալման կամ կալանավորման դեպքում.

դ) աջակցությունը բռնության գործադրմամբ հանցագործությունից տուժածներին.

ե) Միության՝ ծանր դրության մեջ գտնվող քաղաքացիներին Միության կողմից օգնության տրամադրումը և նրանց հայրենադարձությունը:

2. Բացի դրանից՝ անդամ պետությունների՝ ոչ անդամ պետությունում ծառայող դիվանագիտական ներկայացուցչությունները կամ հյուպատոսական գործակալները, այնքանով, որքանով դա իրենց իրավասությունների շրջանակներում է, կարող են նաև աջակցություն ցուցաբերել Միության ցանկացած քաղաքացու, ով այլ հանգամանքներում այդպիսի խնդրանքով է դիմում:

Հոդված 6

1. Չնայած 3-րդ հոդվածին և բացառությամբ ծայրահեղ անհրաժեշտության՝ չի կարող որևէ ֆինանսական հատկացում կամ օժանդակություն տրամադրվել կամ Միության քաղաքացու համար որևէ ծախս կատարվել առանց տվյալ անձի քաղաքացիության անդամ պետության իրավասու մարմինների թույլտվության՝

տրված կամ արտաքին գործերի նախարարության կամ մոտակա դիվանագիտական առաքելության կողմից:

2. Բացառությամբ եթե դիմողի քաղաքացիության անդամ պետության իրավասու մարմինները հստակորեն հրաժարվում են սույն պահանջից, դիմողը պետք է պարտավորվի փոխհատուցել ցանկացած ֆինանսական հատկացման կամ օժանդակության լրիվ արժեքը և կատարած ծախսերը, ինչպես նաև , եթե կիրառելի է, իրավասու մարմինների կողմից նշված հյուպատոսական տուրքը:

3. Փոխհատուցելու պարտավորությունը պետք է ստանա փաստաթղթային ձևակերպում, որով ծանր դրության մեջ գտնվող քաղաքացուց պահանջվում է իր քաղաքացիության անդամ պետության կառավարությանը փոխհատուցել իր համար կատարված բոլոր ծախսերը կամ իրեն վճարված դրամական գումարը, ինչպես նաև ցանկացած կիրառելի տուրք:

4. Դիմողի քաղաքացիության անդամ պետության կառավարությունը պետք է, դիմումի համաձայն, բոլոր ծախսերը փոխհատուցի աջակցություն ցուցաբերած անդամ պետության կառավարությանը:

5. Փոխհատուցման պարտավորության միասնական ձևերը ներկայացված են I և II հավելվածներում:

Հոդված 7

Ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո սույն Որոշումը պետք է վերանայվի՝ հաշվի առնելով ձեռք բերված փորձը և «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի 8գ հոդվածի նպատակը:

Հոդված 8

Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում, երբ բոլոր անդամ պետությունները ծանուցել են Խորհրդի գլխավոր քարտուղարությանը, որ Որոշման կիրառման համար իրենց իրավական համակարգերով պահանջվող գործընթացները կատարվել են:

Հոդված 9

Սույն Որոշումը հրապարակվում է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

Կատարված է Բրյուսելում, 1995 թվականի դեկտեմբերի 19-ին:
Խորհրդի կողմից՝
նախագահ Լ. Ատինգա Սեռնա

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ